

Հայ Ազգային Կոնգրես

"100 քայլ"

Սոցիալ-տնտեսական քաղաքականության համակարգային վերափոխման ծրագիր /Նախագիծ/

Հայ Ազգային Կոնգրեսը հրապարակային քննարկման է ներկայացնում սոցիալ-տնտեսական քաղաքականության համակարգային վերափոխման "100 քայլ" ծրագիրը, որի հիմնական նպատակն է Հայաստանում ստեղծված տնտեսական համակարգի արմատական վերափոխումը եւ ժողովրդի գործուն մասնակցությամբ կայուն զարգացման տնտեսության ստեղծումը: Ներկա համակարգի էությունը մի քանի օլիգարխների եւ նրանց մերձավոր ընտանիքների ձեռքում երկրի տնտեսական ռեսուրսների գերկենտրոնացումն է, պետական իշխանության լծակների օգտագործումը այդ խմբի գերշահույթների ապահովման համար: Ապօրինի հարկային եւ մաքսային արտոնությունները, մենաշնորհները, դրամի արհեստական արժեւորմամբ ներմուծողների գերշահույթների սպասարկումը, սեփականության իրավունքի ոտնահարումը հանգեցրել են արտադրության եւ արտահանման աղետալի կրճատման, ազատ մրցակցության վերացման, չհիմնավորված թանկացումների, գործարար ակտիվության եւ տնտեսության ընդհանուր անկման՝ առաջացնելով ժողովրդի սոցիալ-տնտեսական վիճակի օրեցօր վատթարացում: Մանր եւ միջին բիզնեսի վրա հիմնական հարկային բեռի փոխադրումը եւ պետական մարմինների կամայականությունները խեղդում են մասնավոր նախաձեռնության վրա հիմնված ձեռներեցությունը, ճնշում ժողովրդի ստեղծագործական էներգիան եւ հավատը սեփական ուժերի նկատմամբ, առաջացնում արտագաղթ եւ աղքատություն:

Ստեղծված իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ են արմատական վերափոխումներ: Միայն զանգվածային համաժողովրդական շարժումը, որը կապված չէ այդ համակարգից օգտվող օլիգարխների հետ որեւէ կախվածություններով կամ պարտավորություններով, ի վիճակի է, հանուն ժողովրդի եւ պետության զարգացման, դուրս գալ գործող համակարգի շահերի դեմ եւ անհրաժեշտ հետեւողականությամբ իրականացնել այդպիսի համակարգային փոփոխություններ: Հայ Ազգային Կոնգրեսը պատրաստ է ժողովրդի դատին հանձնել գործողությունների այնպիսի ծրագիր, որը ցույց կտա, որ Կոնգրեսը չի սահմանափակվում նման վերափոխումների անցկացման համար քաղաքական կամքի մասին հավաստիացումներով միայն, այլ նաեւ շատ կոնկրետ լուծումներ եւ մեխանիզմներ ունի այդ նպատակների իրագործման համար:

Սոցիալ-տնտեսական քաղաքականության համակարգային վերափոխման առաջարկվող ծրագիրը ներկայացվում է քննարկման Հայ Ազգային Կոնգրեսի Քաղաքական խորհրդի որոշմամբ: Ծրագիրը պատրաստել է Կոնգրեսի տնտեսական հանձնաժողովը՝ Հրանտ Բագրատյանի գլխավոր ղեկավարությամբ, նրա մեջ ներառվել են Կոնգրեսի անդամ կուսակցությունների առաջարկները եւ դիտողությունները:

Մտորև ներկայացված փաստաթուղթը ծրագրի մի մասն է ընդամենը, որում ներկայացված են սոցիալ-տնտեսական եւ կառուցվածքային քաղաքականության ընդհանուր մոտեցումները: Դրանք ներառում են Կոնգրեսի մոտեցումները ֆիսկալ, դրամավարկային, ֆինանսական քաղաքականության, գործարարության խրախուսման, սոցիալական քաղաքականության հիմնախնդիրների մասով: Ճյուղային տնտեսական քաղաքականության բաժնից այստեղ ներկայացված է միայն գյուղատնտեսությունը՝ նկատի ունենալով դրանում ստեղծված աղետալի վիճակը վերջին 10 տարիների քաղաքականության հետեւանքով: Տնտեսության, հասարակական կյանքի ու պետական կառավարման մյուս ոլորտներում (արդյունաբերություն, առևտուր և ծառայություններ, առողջապահություն, կրթություն, գիտություն, սոցիալական ապահովության եւ ապահովագրություն, բնապահպանություն, տուրիզմ, սպորտ, երիտասարդություն, իրավապահ ոլորտ, զինված ուժեր, դատական համակարգ, պետական կառավարում եւ ինքնակառավարում և այլն) քաղաքականության ծրագիրը կհրապարակվի ավելի ուշ, բնագավառ առ բնագավառ:

Հայ Ազգային Կոնգրեսի Կենտրոնական գրասենյակը շնորհակալություն է հայտնում տնտեսական, գիտության եւ կրթության, առողջապահության հանձնաժողովներին, առանձին մտավորականների ու քաղաքացիների՝ ծրագրի մշակմանը գործուն մասնակցություն ունենալու համար: Կոնգրեսը ողջունում է քաղաքացիների, մասնագետների, հասարակական կազմակերպությունների, քաղաքական ուժերի՝ ծրագրի կատարելագործման ուղղված առաջարկները եւ դիտողությունները, որոնք կարելի է ուղարկել հետեւյալ հասցեներով. Երևան, Կորյունի 19Ա, 4-րդ հարկ, էլեկտրոնային փոստ economy@anc.am, կամ մուտքագրել www.anc.am կայքի միջոցով:

Հարկային և մաքսային քաղաքականություն

1. **Հարկային բեռի վերաբաշխում միջին և փոքր բիզնեսից դեպի խոշոր բիզնես.** Հարկային և մաքսային համակարգի կարգավորման ու զարգացման հիմնական սկզբունքները պետք է լինեն. ա) հարկման բազայի ընդլայնումը, բ) ստվերի վերացումը, գ) ձեռնարկատիրական գործունեության խրախուսումը, դ) հարկային վարչարարության նվազեցումն ու հարկային բեռի հավասարաչափ բաշխումը: Արտասահմանյան մասնագետների գնահատմամբ, այսօրվա վիճակով պետական բյուջեի հարկային եկամուտների սուկ 31 տոկոսն է (առանց արտասահմանյան ձեռնարկությունների) վճարվում խոշոր ձեռներեցների կողմից, մինչդեռ պետք է լինեի 65-67 տոկոսը: Ըստ այդմ՝ խոշոր բիզնեսի լիարժեք հարկումը հրատապ խնդիր է: Հակառակ պարագայում՝ անհավասար և անարդար պայմաններում հայտնված փոքր ու միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) դատապարտված է վերացման:
2. **Պարզեցված հարկի միանման կիրառում բոլոր բիզնեսների համար.** 1997-2001թթ. ձևավորվել էր հարկային "եռաչափ" տարածություն. պարզեցված հարկ վճարող, հաստատագրված հարկեր վճարող և սովորական հարկեր վճարող: Այդ երեք համակարգերի ինտեգրման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ էր, որպեսզի մինչև որոշակի նվազագույն գումարը՝ բիզնեսի ծավալները հարկվեին մեկ դրույքով (ինչպես պարզեցված հարկի պարագայում), դրանից հետո (խոշոր բիզնեսի համար)՝ հարկավորումը իրականացվեր սովորական ձևով, այսինքն կիրառվեին բոլոր հարկատեսակները: Փոխանակ ապահովվեր այս զարգացումը, պարզեցված հարկը գործնականում դուրս մղվեց շրջանառությունից: Դրա վերստին կիրարկումը, մինչև որոշակի սահման հարկման հարաբերականորեն ցածր մակարդակ ունենալը ՓՄՁ-ների վերակենդանացման, դերի ու նշանակության բարձրացման հիմնական լծակներից է: Պարզեցված հարկի մեծությունն անընդհատ փոփոխելով՝ պետությունն, ըստ էության, պետք է ուրվագծի ՓՄՁ սահմանները:
3. **Եկամտահարկի ավելի բարձր, քան շահութահարկի դրույքների սահմանում, պրոգրեսիվ եկամտահարկի սանդղակի կիրարկում.** Առաջիկա 10-15 տարիների համար եկամտահարկի տոկոսադրույքը մի փոքր ավելի բարձր պետք է սահմանել, քան շահութահարկինը (գործի պետք է դնել այսպես կոչված "հարկային խաչի" մեխանիզմը): Պետք է մտցնել եկամտահարկի պրոգրեսիվ սանդղակ: Հարկման նման համակարգը պետք է պահպանել այնքան ժամանակ, քանի դեռ չի վերականգնվել խոշոր բիզնեսի և ՓՄՁ-ների տեսակարար կշիռների լավագույն և ամենաարդյունավետ հարաբերակցությունը: Բարձր շահութաբերության պարագայում (պայմանավորված ներմուծումներով ու մենաշնորհներով) պետք է գործի շահութահարկի հարկման պրոգրեսիվ սանդղակ:
4. **Նվազագույն աշխատավարձի մոտեցում միջին աշխատավարձին.** Առաջիկա 10-15 տարիներ համար նվազագույն աշխատավարձի մեծությունը պետք է մոտեցնել միջին աշխատավարձին, ինչն արդյունավետ մեխանիզմ կլինի ստվերային տնտեսության տեսակարար կշիռի իջեցման համար:
5. **Գերբարձր եկամուտների ավելի բարձր հարկման մեխանիզմի կիրառում.** Եկամտահարկի պրոգրեսիվ սանդղակը պետք է գործի որոշակի սահմաններում: Գերբարձր աշխատավարձի, բոնուսների պարագայում (հատկապես՝ ֆինանսական հատվածի ղեկավար աշխատողների նկատմամբ) պետք է գործի գերհարկման մեխանիզմը: Բացի այդ, նշված բարձր աշխատավարձերի նկատմամբ պետք է որոշել սահմանային չափաքանակ, որին գերազանցող մասը արտադրանքի ու ծառայությունների ինքնարժեքի մեջ չպետք է հաշվառվի:
6. **Էլիտար շինարարության հարկում: Սահմանամերձ շինարարության սուբսիդավորում, գույքի իրացման հարկի սահմանում.** Պետք է սահմանել շինարարության հարկ՝ միջինը 10 տոկոս: Այս հարկը կտարբերակվի ըստ տարածքային սկզբունքի՝ իջեցնելով մինչև 0,

իսկ առանձին դեպքերում, ծայրամասերի համար՝ մինչև նույնիսկ մինուս 10 (երբ պետությունը սուբսիդավորում է շինարարությունը) և 15 տոկոս, օրինակ, Երևանի կենտրոնի համար: Երկրորդ անգամ իրացվող անշարժ գույքի նկատմամբ պետք է սահմանել հարկ՝ միջին հաշվով շահույթի 5 տոկոսի չափով (նորից տարբերակված տարածաշրջանային սկզբունքով): Պետությունը կսահմանի վաճառքի նվազագույն գներ՝ միաժամանակ պարտավորվելով գներ այդ անշարժ գույքը, եթե դրանից ավելի բարձր գին չի առաջարկվում:

7. **Շինարարության ոլորտում կապիտալի սառեցման կանխում.** Պետք է խստացնել անավարտ շինարարության հարկումը, կառուցապատողների նկատմամբ առաջ քաշել միջոցների պահուստավորման պահանջ: Այս ամենը թույլ կտա կանխել կապիտալի սառեցումը ոլորտում, շինարարությունը դուրս բերել Երևանից և բացառել հետագայում այս ոլորտի պատճառով համապետական ճգնաժամը: Շինարարության հարկման նոր մեխանիզմները թույլ կտան հարկային բեռը հավասարաչափ բաշխել, խոշոր ձեռներեցներին ամբողջությամբ հարկային դաշտ բերել:
8. **Եկամուտների եւ գույքի համընդհանուր հայտարարագրում:** Անհապաղ պետք է սկսել 18 տարեկանից ի վեր բոլոր քաղաքացիների եկամուտների և գույքի պաշտոնական հայտարարագրումը:
9. **Հարկային կանխավճարների արգելում.** Պետք է բացառել շահութահարկից կանխավճարներ տալու արատավոր պրակտիկան: Հարկատուն պարտավոր չէ վարկավորել պետությանը: Մասնավոր, որ այդ սկզբունքը երբեք չի գործել խոշոր հարկատուների նկատմամբ, որոնք, որպես կանոն, պետական խոշոր պաշտոնյաներ են:
10. **Հարկային տարածամկետ վճարումներ ինովացիոն բիզնեսի համար.** Պետք է սահմանել ինովացիոն բիզնեսի հստակ չափորոշիչներ և դրանց հիման վրա այդ ձեռնարկությունները ազատել շահութահարկից առաջին երկու տարիների համար՝ հետագա 5 տարիներին այդ գումարները բյուջե մուծելու պայմանով: Արտասահմանյան ներդրողների նկատմամբ, ասվածից դուրս, պետք է շարունակի գործել ներդրումների գծով առկա արտոնությունների համակարգը:
11. **Մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների խրախուսում.** Պետությունը պետք է երաշխավորի մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների գործունեությունը և թույլ տա եկամուտների մինչև 5 տոկոսը (ինչպես գործավորների, այնպես էլ գործատուների համար), առանց հարկումի, փոխանցել նշված հիմնադրամներին:
12. **Ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) կրճատում, շրջանառության հարկի կիրառում.** ԱԱՀ-ը պետք է սահմանել 18 տոկոսի չափով: Առանձին ապրանքատեսակների նկատմամբ պետք է կիրառել տարբերակված (ավելի ցածր) ԱԱՀ պիեսմա: Հետագայում, ԵՄ և ՌԴ հետ համապատասխան աշխատանք տանելուց հետո, ԱԱՀ-ը պետք կլինի փոխարինել 5-7 տոկոսանոց շրջանառության հարկով: Ավելի ուշ անցում պետք է կատարել կորպորատիվ հարկավորման համակարգին:
13. **Թունդ խմիչքների ակցիզների բարձրացում, գինու ակցիզի իջեցում.** Պետք է բարձրացվեն օղու, լիկյորների վրա դրվող ակցիզները, իսկ գինու ակցիզն իջեցնել: Գինենյութի վրա դրված ակցիզը պետք է հաշվանցել ավելացված արժեքի նման: Մյուս ակցիզային հարկերը պետք է խմբագրել այն հաշվով, որպեսզի ներքին արտադրողները ավելի վատ պայմաններում չլինեն, քան ներկրողները:
14. **Գյուղմթերքների թափոնների պետական հաշվառում.** Գյուղմթերքներ մթերող ձեռնարկություններն իրենց թափոնները հաշվառման պետք է հանձնեն հարկային մարմիններին: Թափոնների միջոցով արտադրության իրական ծավալները հարկային մարմինների կողմից պետք է վերահսկվեն նաև հանքա-հումքային ձեռնարկություններում:
15. **Ընդերքի հանրային տնօրինում.** Հանքա-հումքային արդյունաբերության մեջ (մոլիբդեն, պղինձ, պեռլիտ, տուֆ, բազալտ, երկաթ, ոսկի և այլն) պետք է վերացնել բնության պաշարների համար վճարը: Դրա փոխարեն ամեն տարի բյուջեի հետ միասին պետք է

հաստատել բուն հանքի գինը, որով շահագործողն այն գնում է հանրությունից: Այդ կերպ հնարավոր կլինի հարկման մեխանիզմն այստեղ կապակցել հումքի համաշխարհային գների փոփոխության հետ: Պայմանավորված հումքի համաշխարհային գների դինամիկայով՝ արդյունահանող ընկերությունը պետության հետ պայմանավորված գնից վեր ստացած եկամուտը պետք է մուծի բյուջե:

16. **Բնության պարտադիր վերականգնման պահանջի կիրառում.** Բնապահպանության վճարների փոխարեն պետք է գործեն բնությունը վերականգնելու պարտադիր պահանջը և պրոգրեսիվ (ժամանակի ընթացքում) տուգանքների համակարգը: Հակառակ պարագայում գույքն ամբողջությամբ պետք է բռնագրավվի հոգուտ պետության: 1991-2010 թթ. ՀՀ անտառների 50 տոկոսը վեր են ածվել թփուտների կամ նոսրացել են վտանգավորության աստիճանի, անտառների տեսակարար կշիռը կտրուկ անկում է ապրել: Իրողությունն սակայն այն է, որ 1991-1994 թթ, պատերազմի ու շրջափակման պայմաններում, շատ ավելի քիչ անտառ է հատվել, քան այն, ինչ հատվել է բիզնես նպատակով որպես շինափայտ 1998-2010 թթ:
17. **Խոշոր հողատերերի հատուկ հարկում.** Խոշոր հողատերերը (50հա և ավելի) պետք է հարկվեն նույն ռեժիմով, ինչ արդյունաբերությունը, առևտուրը և այլն: Այստեղ հողի կադաստրային գնահատականի փոխարեն՝ պետք է կիրարկվի բերքի և եկամուտի գնահատման մեխանիզմը:
18. **Խոշոր գույքի հարկի բարձրացում.** Էականորեն պետք է բարձրացնել գույքահարկի դերը՝ այն տարբերակելով ըստ գույքի չափերի և գոտիականության (տարածքային գործոն): Միաժամանակ, մինչև որոշակի սահման՝ գույքահարկը պետք է նվազեցվի պաշտոնապես հայտարարագրված եկամուտների և վճարված հարկերի չափով (համամասնորեն): Մրանով իսկ ևս մեկ լուրջ քայլ կկատարվի հարկային բեռը խոշոր ձեռներեցների և մանր ու միջին բիզնեսի միջև արդարացիորեն բաշխելու ուղղությամբ:
19. **Ժառանգության պրոգրեսիվ հարկ:** Գույքի և ունեցվածքի որոշակի սահմանից սկսած անհրաժեշտ է մտցնել ժառանգության պրոգրեսիվ հարկ՝ նպատակ ունենալով բացառել ապօրինի ճանապարհով ձեռք բերված ունեցվածքի օրինականության ապահովումը ժառանգության մեխանիզմի միջոցով:
20. **ԱԱՀ վերադարձ, տուգանքներ պետության նկատմամբ.** Պետությունը մինչև վերջ պետք է կատարի իր պարտականությունները հարկային կանխավճարների և ԱԱՀ վերադարձման ուղղությամբ: Չվերադարձած գումարների մասով պետության նկատմամբ պետք է կիրարկել տուգանքների նույն համակարգը, ինչպիսին կիրարկվում է հարկատուների նկատմամբ:
21. **Կապիտալի արտահանման հարկի սահմանում.** Պետք է սահմանել կապիտալի արտահանման հարկ: Տնտեսական զարգացման արդի պայմաններում ՀՀ տնտեսության մեջ ներդրումների աճի հիմնական ռեզերվը ներքին ինայոդությունների ընգրկումն է, երկրից կապիտալի՝ օրեցօր ահագնացող արտահոսքի կանխումը: Այսպես, 2002թ. կապիտալի արտահոսքը կազմել է 245, 2003-ին՝ 314, 2004-ին՝ 494, 2005-ին՝ 613, 2006-ին՝ 794 միլիոն դոլար: 2007-ի առաջին 8 ամիսներին կապիտալի արտահոսքը կազմել է 593 մլն դոլար, իսկ տարեվերջին այն հատել է 1 մլրդ դոլարի սահմանը: Փոքր և աղքատ երկրի համար սա կործանարար է: Բնակչության մեկ շնչին ընկնող կապիտալի արտահանմամբ (340 դոլար) Հայաստանը ցածր եկամուտներ ունեցող երկրների շարքում առաջինն է: Կապիտալը փախչում է Հայաստանից, որովհետև չի վստահում իշխանություններին: Եվ ուրեմն, արտասահմանյան ներդրումները խրախուսելու վերաբերյալ մոդայիկ ֆրազաների փոխարեն՝ պետք է կարողանալ, նախևառաջ, կանգնեցնել կապիտալի օրեցօր ահագնացող արտահոսքը: Պետք է սահմանել կապիտալի արտահանման հարկ (նախօրոք գումարից հանելով ՀՀ ներքերած կապիտալը և բացառելով արտասահմանյան ներդրողներին): Այս փոփոխությունները պետք է կատարվեն՝ նկատի ունենալով Առևտրի Համաշխարհային Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները՝ փոխադարձ ներդրումների համար հավասար պայմաններ

ապահովելու առումով: Օրենսդրությամբ բանկերին պետք է արգելել կապիտալի արտահանման ցանկացած գործարքի կատարում, քանի դեռ հարկային մարմինները տեղեկանք չեն տվել հարկային պարտավորությունների կատարման մասին:

22. **Էլեկտրոնային մաքսագերծում, ներմուծման գների սահմանման կամայական համակարգի վերացում.** Պետք է ներմուծվող արտադրանքների նկատմամբ մաքսատուրքերը սահմանել ինվոյսում նշված գնի նկատմամբ: Նույն ապրանքներն արտադրող ներքին արտադրողի շահերը պետք է պաշտպանել համալիր հարկային քաղաքականության (մասնավորապես՝ պրոգրեսիվ շահութահարկի մեխանիզմի) միջոցով, այն հաշվով, որ ներքին արտադրողի շահերն առնվազն հավասարեցվեն ներմուծողի շահերին: Մաքսային աշխատողներն ընդհանրապես պետք է զրկվեն գին սահմանելու իրավունքից: Իբրև հիմք պետք է ընդունվի էլեկտրոնային կողավորմամբ “ինվոյսը”:
23. **Արտադրական սարքավորումների մաքսատուրքերի վերացում: Բարձրացված մաքսատուրքերի կիրառում շքեղ մեքենաների նկատմամբ.** Ներմուծվող մեքենաների մաքսատուրքերը պետք է խստորեն տարբերակել ըստ մեքենայի շարժիչի հզորության ու շքեղության չափորոշիչների, իսկ արտադրական սարքավորումների նկատմամբ մաքսատուրքերը դարձնել 0:
24. **Այլընտրանքային մաքսատների հիմնում.** Անհրաժեշտ է բացել այլընտրանքային, ոչ պետական մաքսային ծառայություն: Վերջինիս գործունեությունը կանոնակարգելու համար պետք է ընդունվեն դրա հավաստագրման մեխանիզմները մանրամասնորեն կանոնակարգող օրենսդրական փաստաթղթեր:
25. **Խաղային բիզնեսում պետության վերահսկողության հաստատում.** Պետք է բացառել ոչ պետական լոտոների, վիճակախաղերի, զառերի գոյությունը: Նման ինստիտուտների շահագործման բացառիկ իրավունքը պետք է տրվի ՀՀ Ֆինանսների նախարարությանը: Գործող տոտալիզատորները, խաղադրույքներ կատարելու հաստատությունները պետք է գործեն պետության ներկայացուցչի հսկողության տակ: Բոլոր խաղատներում և նմանատիպ ձեռնարկներում պետությունը պետք է լինի փայտեր և ունենա իր ներկայացուցիչը: Խաղատների համար առանձին տարածք պետք է հատկացվի՝ թույլ զարգացած եւ հեռավոր սահմանամերձ վայրերում, բացառվի դրանց առկայությունը Երևանում, Գյումրիում, Վանաձորում, հանգստյան գոտիներում:
26. **Հարկային արտոնությունների բացառում.** Տնտեսվարող որևէ սուբյեկտ (հիմնադրամներ, կրոնական կազմակերպություններ, ամեն տեսակ բարեգործություն) հարկային արտոնություն չպետք է ունենա:

Բյուջետային քաղաքականություն

27. **Պետական եկամուտների հավաքագրման աստիճանի բարձրացում.** Պետական եկամուտների հավաքագրման աստիճանը յուրաքանչյուր տարի պետք է բարելավել 2 տոկոսով՝ 2015 թ. այն հասցնելով 28տոկոսի:
28. **Պարտքերի սպասարկում և մարում/ՀՆԱ հարաբերակցության սահմանում.** ՀՀ պետական պարտքն առ 01.01.2010 կազմում է շուրջ 3.6 մլրդ դոլար: Վերջին 2 տարիներին այն ավելացել է 2,7 անգամ: 2008-ին արտաքին պետական պարտքի սպասարկումը ՀՀ բյուջեից «խել» է 54.1 մլն դոլար, 2009-ին՝ 73.2, 2010-ին այդ թիվը կազմելու է 114.5, 2011-ին՝ 128, 6, 2012-ին՝ 280.4, իսկ 2013-ին՝ 478.2 մլն. դոլար: Պետական պարտքի սպասարկումը դրանից հետո կիսի բյուջեի առնվազն 20-30տոկոսը: Այս արկածախնդիր քաղաքականությունն անմիջապես պետք է դադարեցնել: Դրա համար պետք է բացառել արտաքին պարտքի ավելացումը ՀՆԱ նկատմամբ, խստորեն սահմանափակել ներքին փոխառությունները՝ պետական ծախսերը հոգալու նպատակով՝ նկատի ունենալով այդ պարտքերի ու փոխառությունների սպասարկման և մարման ծախսեր/ՀՆԱ այսօրվա վիճակով ձևավորված հարաբերությունը:
29. **Պետության կողմից ակտիվ ներդրումային քաղաքականության իրականացում.** Կառավարությունն իր մասնակցությունը պետք է բերի ոչ պետական ներդրումային հիմնադրամներին, որոնք իրականացնում են ժողովրդատնտեսական համընդհանուր նշանակության օբյեկտների շինարարությունը՝ արժեթղթերի թողարկման, հանրապետություն ներս մտնող տրանսֆերտների ստերիլիզացիայի, սփյուռքահայության և այլոց միջոցների հաշվին:
30. **Արտաքին պետական պարտք վերցնելու կառավարության բացառիկ իրավունքի սահմանում.** Պետական պարտք վերցնելու իրավունքը պետք է տրվի միմիայն ՀՀ կառավարությանը: Մասնավորապես, պետք է արգելել ՀՀ Կենտրոնական Բանկի (ԿԲ) կողմից ինքնուրույնաբար, առանց կառավարության թույլտվության ու վերահսկողության, արտաքին պարտավորություններ ստանձնելը:
31. **Օրենք պետական երաշխիքների մասին.** Պետք է ընդունել օրենք պետական երաշխիքներ տրամադրելու կարգի և դրանցից օգտվելու մրցութային հիմունքների մասին՝ այս ասպարեզում կոռուպցիան ու կամայականությունները բացառելու նպատակով:
32. **Հայկական պետական գրանտներ.** Պետական ծախսերի մեծ մասը պետք է իրականացնել ծրագրային բյուջետավորման տեսքով՝ նախահաշվային ֆինանսավորումը հասցնելով նվազագույնի: Պետք է ստեղծել հայկական պետական գրանտների համակարգ:
33. **Պետական ապարատի շեշտակի կրճատում.** Կառավարության, նախարարությունների, կառավարման հանրապետական մյուս մարմինների (ծառայությունների, հանձնաժողովների), պետական հիմնադրամների, մարզպետարանների, քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմը պետք է կրճատվի 1.5 անգամ, այդ դեպքում աշխատավարձերը կավելանան 2.2 անգամ: Պետք է բացառվեն գործառույթների կրկնությունը, պատվիրատուի և կատարողի գործառույթների համատեղումը :
34. **Մասնավոր կենսաթոշակային հիմնադրամների ստեղծում.** Պետական կենսաթոշակային նպաստներին զուգահեռ՝ գործատուների և գործավորների մասնակցությամբ, պետք է արմատավորել կորպորատիվ ապահովության համակարգ : Կառավարությունն ի դեմս ֆինանսների նախարարության՝ պետք է երաշխավորի այդ հիմնադրամներում ներդրված միջոցները: Ֆինանսների նախարարությանը պետք է վերադարձվեն սոցիալական ապահովության և ապահովագրության պետական կարգավորման գործառույթները:
35. **Պետական հիմնարկների կողմից բանկային ավանդների արգելում.** Պետք է արգելել բյուջետային ու համայնքային կազմակերպությունների կողմից բանկերում ավանդներ բացելու պրակտիկան: Հավելյալ եկամուտների պարագայում միջոցները պետք է տրվեն ԿԲ ժամանակավոր տնօրինությանը:

36. **Պետական գույքի վարձակալության կարգավորում.** Պետական, համայնքային գույքը վարձակալության հիմունքներով տնօրինող ցանկացած կազմակերպություն վարձավճարը պետք է մուծի համապատասխան բյուջե՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված վարձավճարի նորմատիվներով: Պետական կազմակերպությունները նույպես պետք է այդ նույն նորմատիվներին համապատասխան վարձավճար կմուծեն: Այս կերպ կբացառվի պետական չինովնիկների կողմից պետական գույքի վարձակալության հաշվին հարստանալը:
37. **Պետական բյուջեի շեշտակի աճ.** Թվարկած հարկային և բյուջետային միջոցառումների իրականացման դեպքում ՀՀ պետական բյուջեն հենց 2010թ. կհասցվի 4.5-5 մլրդ դոլարի:
38. **Ավանդների վերադարձ.** Պետությունը ԽՍՀՄ ինայբանկի ավանդները պետք է ձևակերպի որպես պետական պարտատոմս և դրանք մարի 2 անգամ ավելի մեծ չափով և 2 անգամ ավելի արագ՝ քան նախատեսված է գործող՝ 2005թ. ընդունված օրենքով:

Բանկային ոլորտ, վարկային կազմակերպություններ, ներդրումային հիմնադրամներ, արժեթղթերի շուկա

39. **Դրամի արհեստական արժևորման արգելում.** Անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություններ, ինչով ԿԲ-ի գործառույթները չեն կենտրոնանա միայն սղաճի տեմպերը պահպանելու վրա: Պետք է բացառվի այդ նպատակով ազգային արժույթը արհեստականորեն արժևորելու հանցավոր պրակտիկան: Ազգային արժույթի արժևորման հիմքը կարող է լինել միմիայն արտահանման գերազանցումը ներմուծման նկատմամբ:
40. **Տրանսֆերտների օգտագործում տնտեսության զարգացման համար.** Արժույթային այլ (արտահանմամբ չպայմանավորված) տրանսֆերտների պարագայում ԿԲ-ը պետք է ստերիլիզացնի արժույթային հոսքերը հանրապետություն՝ ի հաշիվ պետական պահուստների ավելացման: Վերջիններս, իբրև վարկային ռեսուրս, պետք է օգտագործել հանրապետության տնտեսությունը վարկավորելու նպատակներով:
41. **ԿԲ-ի քաղաքականության խորհրդարանական վերահսկում.** Ամեն տարի, բյուջեից գատ, ԱԺ-ում պետք է քննարկվեն և հաստատվեն ԿԲ կողմից տարվող դրամավարկային քաղաքականության հիմնական պարամետրերը:
42. **Տնտեսական նորմատիվների սահմանում բոլոր ֆինանսական հաստատությունների նկատմամբ:** ԿԲ-ին պետք է իրավունք տրվի, առևտրային բանկերից բացի, գործունեության կարգավորման տնտեսական նորմատիվները տարածել բոլոր ֆինանսական հաստատությունների նկատմամբ: Եթե հաստատության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կառավարության (ֆինանսի) կողմից, ապա նորմատիվները պետք է հաստատվեն համատեղ:
43. **Բանկերի գրանցման պահանջների մեղմացում.** Զգալիորեն պետք է թուլացվեն նոր բանկերի գրանցման պահանջները: Մասնավորապես, դրանց հիմնական կապիտալի նկատմամբ պահանջները կսահմանափակվեն 1,5 մլրդ դրամով (ներկայումս ավելի քան 2.5 մլրդ դրամ է):
44. **ԿԲ-ի որոշումների բողոքարկման ընձեռում.** Ամբողջովին պետք է վերափոխել բանկային գործունեության մասին օրենսդրությունն այն հաշվով, որպեսզի այս կամ այն հարցով ԿԲ նախագահի կամ խորհրդի որոշումները, առանց բացառության, հնարավոր լինի բողոքարկել դատարանում:
45. **ԿԲ-ում հակակշիռների ստեղծում.** Պետք է ավելացնել ԿԲ խորհրդի իրավասությունները որոշումներ ընդունելիս: ԿԲ տնօրենի և խորհրդի նախագահի պաշտոնները պետք է առանձնացնել:
46. **Վերավարկավորման սահմանափակում.** Վերավարկավորումը կամ վարկերի դուրս գրումը պետք է թույլատրել միմիայն ԱԺ կողմից օրենք ընդունելու պարագայում:

47. **Բանկերի վերակազմակերպում բաց բաժնետիրական ընկերությունների.** Բոլոր առևտրային բանկերը պետք է վերագրանցել որպես բաց բաժնետիրական ընկերություններ, օրենսդրորեն պետք է ընդլայնել միևնույն արտադրանքների իրավունքները:
48. **Բանկերում կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրում.** Բանկերը կարճ ժամկետում պետք է անցնեն կորպորատիվ կառավարման նորագույն համակարգերին: Օրենսդրորեն սահմանազատումներ պետք է մտցվեն դրանց սեփականատերերի և կառավարիչների գործառույթների տարանջատման, բոլոր բաժնետերերի շահերը հաշվի առնող կառավարիչների ինստիտուտի ներդրման ուղղությամբ:
49. **Բանկերի կողմից ներդրումների դադարեցում, ազգային արժույթի ուժեղացում.** Պետք է արգելվի ներդրումային նորմատիվների գործունեությունը (բանկային կարգավորման տնտեսական նորմատիվների 4-րդ խումբ): Դրամի կայունությունն ապահովելու նպատակով վարկերը պետք է տրվեն միայն ազգային արժույթով, ազգային արժույթով ընդունվեն ավանդները: Ըստ որում, օրենքով սահմանված կարգով, համապատասխան զեղչի առկայության դեպքում, բոլորը հնարավորություն պետք է ստանան ավանդներ ունենալ նաև ԿԲ-ում:
50. **Մասնագիտացված բանկերի գործունեության թույլատրում.** Անցում պետք է կատարվի երկդաշտյա կամ էլ բազմադաշտյա նորմատիվների համակարգի (այսպես կոչված՝ ճկուն տնտեսական նորմատիվներ), ինչը թույլ կտա տարանջատել ներդրումային բանկինգը և առևտրային (ընթացիկ) բանկինգը, զարգացնել մասնագիտացված բանկերը:
51. **Ավանդների ապահովագրման ընդլայնում.** Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից պետք է ապահովագրել դրանց մինչև միջին հաշվով 60 տոկոսը: Ապահովագրության չափը պետք է կապ ունենա ավանդի չափի հետ (նվազող պրոգրեսիայով): Դա պետք է վերաբերի ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց:
52. **ԿԲ-ից բանկային վերահսկողության գործառույթների զգալի մասի դուրս բերում.** Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը պետք է հանվի ԿԲ-ի ենթակայությունից: Բանկային վերահսկողությունը մեծ մասով պետք է տրվի այս հիմնադրամին՝ ԿԲ-ին հիմնականում թողնելով կարգավորումը:
53. **Բանկային ակտիվների աճի խրախուսում:** Թվարկված խնդիրների լուծմամբ 2012թ. առևտրական բանկերի ընդհանուր ակտիվները կարող են կազմել ոչ պակաս, քան 12 մլրդ դոլար կամ ՀՆԱ-ի շուրջ 70 տոկոսը: Պետությունը քայլեր պետք է իրականացնի առևտրային բանկերի վարկային ռեսուրսները համարելու ուղղությամբ:
54. **Ֆինանսական շուկայի համալիր զարգացում.** Իրական քայլեր պետք է ձեռնարկվեն դեռևս 1992թ. մայիսին հռչակված՝ Հայաստանը տարածաշրջանային ֆինանսական շուկա դարձնելու ծրագրի դրույթներն իրագործելու ուղղությամբ: Պետք է զարկ տալ ներդրումային հիմնադրամների, ֆոնդային բորսայի, վարկային կազմակերպությունների գործունեությանը:
55. **Ֆոնդային բորսայի դերի շեշտակի բարձրացում.** Բական դեր պետք է ունենա հայկական անկախ ֆոնդային բորսան: 1998-2007թթ. այս ինստիտուտի հնարավոր գործունեությունը մշտապես խափանվել է իշխանությունների կողմից. տնտեսության առկա կենտրոնացվածության և մենաշնորհների տիրապետման պայմաններում ֆոնդային բորսայի մասին խոսելն ավելորդ է: Միայն տնտեսության մեջ անմիջական դերակատարում չունեցող իշխանավորների պարագայում է հնարավոր արժեթղթերի շուկայի գործունեությունը: Այդ պարագայում ոչ միայն առևտրական բանկերը, այլև՝ գերիշխող կամ մենաշնորհային դիրք ստացած ընկերությունները, ինչպես նաև՝ տնտեսության զարգացման մեջ առանցքային նշանակություն ունեցող առևտրական կազմակերպությունները (մասնավորապես՝ արտադրական ենթակառուցվածքի ձեռնարկությունները), օրենսդրությամբ սահմանված կարգով պետք է գրանցվեն որպես բաց բաժնետիրական ընկերություններ, դրանց արժեթղթերը պարտադիր կարգով

- ենթակա լինեն հրապարակային սակարկությունների ֆոնդային բորսայում: Այս միջոցառումների իրականացմամբ 2015թ. շուկայի կապիտալիզացիան կարող է կազմել ՀՆԱ առնվազն 50 տոկոսը (2005թ. եղել է ընդամենը 0,9տոկոս):
56. **Արժեթղթերի շուկայի դուրս բերում ՀՀ ԿԲ-ի գործառնություններից.** Արժեթղթերի շուկան պետք է կարգավորվի կառավարության կողմից լիազորված մարմնի միջոցով:
57. **Ֆինանսական համակարգի գերլիկվիդայնության բացառում.** Էականորեն պետք է թուլացվեն ԿԲ կողմից հաստատվող հաշվարկային, բանկային, լոմբարդային տոկոսադրույքները և տնտեսական նորմատիվները (բացառությամբ կապիտալի համարժեքայնության նորմատիվի). բանկային ոլորտում առկա հսկայական ռեզերվներն ու գերլիկվիդայնությունը պարզապես վատնում են հասարակության ֆինանսական ռեսուրսները: Այս միջոցառումների շնորհիվ կտրուկ կբարձրանա նաև վարկային ռեսուրսների մատչելիությունը:
58. **Ապահովագրական շուկայի զարգացում:** Պետք ընդունել օրենք (ներ) և համակողմանիորեն զարգացնել ապահովագրական շուկան: 2015թ. այս ընկերությունների ակտիվները կարելի է հասցնել ՀՆԱ-ի 50տոկոս-ին:
59. **Ներքին խնայողությունների հավաքագրման վերահսկում.** Ռազմավարական ներդրողներին պետք է արգելվի հավաքագրել ՀՀ ներքին խնայողությունները IPO-ների միջոցով սեփական բիզնեսը զարգացնելու նպատակով:

Գործարարության խրախուսում, փոքր և միջին բիզնեսի զարգացում

60. **Իշխանության և սեփականության տարանջատում.** Պետք է իրականացվեն որոշակի և հստակ քայլեր, որպեսզի. ա) գործարարությունը տարանջատվի պետական կառավարումից (եթե գործարարը որոշում է զբաղվել քաղաքականությամբ, դառնալ պատգամավոր կամ նախարար, ապա նա իր ունեցվածքը պետք է հանձնի պետական գույքի կառավարման գործակալությանը կամ պետության կողմից լիազորված այլ մարմնի), բ) իշխանության ղեկին հայտնված գործիչը պետք է ունենա չեզոք կառավարչի ձևական ու բովանդակային բոլոր հատկանիշները:
61. **Ինովացիոն տեխնոպարկերի հիմնում.** 2010-2012թթ. Հայաստանում պետք է հիմնվի առնվազն 5 տեխնոպարկ (երկուսը՝ Երևանում, մեկական՝ Գյումրիում, Վանաձորում և Ստեփանակերտում կամ Շուշիում), իսկ մարզային կենտրոններում պետք է բացել գործարարության աջակցության պետական կենտրոններ: Այս տեխնոպարկերում ֆիզիկական և իրավաբանական անձինք 2 տարի առանց որևէ վճարման պետք է հնարավորություն ունենան զարգացնելու իրենց ինովացիոն ձեռնարկատիրական ծրագրերը: Հետագայում այդ միջոցները պետք է փոխհատուցվեն արագացված վճարումների միջոցով:
62. **Համաժողովրդական նշանակության ծրագրերում պետության մասնակցություն.** Պետությունն իր մասնակցությունը պետք է բերի համաժողովրդական նշանակության բիզնես նախագծերին՝ գնելով դրանց բաժնետոմսերի մի մասը՝ հետագայում պարտադիր կարգով դրանք մասնավոր ձեռներեցներին վաճառելու պայմանով: Պետք է խրախուսել և սուբսիդավորել մշտական նոր աշխատատեղերի ստեղծումը փոքր քաղաքներում, հեռավոր և սահմանամերձ գյուղերում:
63. **Պետական դիսկրիմինացիոն հովանավորչության դադարեցում, օրենքի խախտումներով ձեռք բերված գույքի վերադարձ.** Բոլոր գործարարները պետք է ունենան հավասար իրավունքներ և պարտականություններ օրենքի և հասարակության առջև: Պետք է բացառվի երկրի նախագահի կաբինետում այս կամ այն գործարարի հարկային պարտավորությունների մասին որոշումներ կայացնելը. դրա համար կա օրենք և դատական իշխանություն: Պետք է ձեռնարկվեն լայնամասշտաբ գործողություններ ՀՀ ղեկավարության հովանավորչությունն ստացած գործարարների կողմից չվճարված հարկերը մինչև վերջ գանձելու, ապօրինի եկամուտները հասարակությանը

- վերադարձնելու և բնակչության սոցիալական կարիքները հոգալու ուղղությամբ: Միաժամանակ, պետք է հրապարակել սեփականաշնորհված, բայց պայմանագրային պարտավորությունները չկատարած ձեռնարկությունների ցանկը՝ օրենքով միջացառումներ նախատեսել դրանց կրկնակի օտարման կամ լրացուցիչ հարկման ուղղությամբ: Օրինախախտումներով իրականացված գործարքները պետք է վերանայվեն:
64. **Արտադրության ոլորտում տնտեսական նորմատիվների սահմանում և վերահսկում.** Օրենքով պետք է հաստատվեն գործունեության որոշակի տնտեսական նորմատիվներ, որոնց կատարման վերահսկողությունը պետք է տրվի կառավարությանը: Մասնավորապես, համակարգային նշանակության ձեռնարկություններում պարտադիր պահանջներ պետք է դրվեն միջոցների ռեզերվներ ունենալու նկատմամբ:
65. **Փոքր և միջին բիզնեսի ներգրավում պետական գնումների գործարքների մեջ.** Պետական գնումների մասին ՀՀ օրենսդրությունը պետք է լրամշակվի այն հաշվով, որպեսզի սահմանվի գնումների գործարքների որոշակի ծավալ, ինչը կիրականացվի ՓՄՁ-երի միջոցով: Պետական գնումների համակարգը պետք է դուրս բերել ֆինանսների նախարարության ենթակայությունից:
66. **Փոքր խանութների և առևտրի պաշտպանվածության ապահովում.** Պետությունը պետք է խստորեն կանոնակարգի սուպերմարկետների գործունեությունը: Յուրաքանչյուր ծրագրային ժամանակահատվածի համար պետք է սահմանվեն դրանց ցանցային կետերի ստեղծման նորմատիվներ, առաջ քաշվեն որոշակի վայրերում դրանց տեղադրման պահանջներ: Դրա հետ մեկտեղ՝ խոշոր քաղաքներում պարբերաբար պետք է անցկացվեն պարենամթերքի վաճառքի մոբիլ տոնավաճառներ՝ հարկումների կամ պարտադիր վճարումների ցածր մակարդակով: Դա անհրաժեշտ է փոքր խանութների կենսագործունեությունն ապահովելու համար:
67. **Հակամենաշնորհային քաղաքականության փոփոխություն.** Պետք է վերջ տալ մենաշնորհներին և օլիգոպոլիաներին: Անհրաժեշտ է արմատապես փոխել հակամենաշնորհային օրենսդրությունը: Պետական բյուջե պետք է մուտքագրել ոչ թե մենաշնորհային հասույթի 2 տոկոսը, այլ 10 կամ ավելի բարձր տոկոսը՝ այն հաշվով, որպեսզի գանձվի ստացված մենաշնորհային շահույթի 50-95 տոկոսը: 300 մլն դրամի սուզանքի շեմը պետք է վերացնել:
68. **Տնտեսավարող սուբյեկտների իրավունքների ամրապնդում.** Օրենքով սահմանված կարգով՝ տնտեսավարող սուբյեկտները երաշխիքներ պետք է ստանան առ այն, որ պետական մարմինների գործունեությունը դատարաններում բողոքարկելու պարագայում նրանք հետագայում հետապնդումների չեն ենթարկվի:
69. **Գործարարության տուրքերի վերացում.** Քայլ առ քայլ սահմանափակվել են տնտեսական ազատությունները երկրում: Այսպես, մտցված են անհասկանալի բարձր տուրքեր կոնյակի (15 մլն դրամ), ցորենի օդու (15 մլն դրամ), հանքային ջրերի (5 մլն դրամ), մետաղների (15 մլն դրամ), քարերի (1 մլն դրամ) արտադրությանների և մշակման կազմակերպման ոլորտներում: Դժվար չէ նկատել, որ նշված բոլոր ոլորտներում երկրի ղեկավարությունն ունի հովանավորյալներ: Նշված քաղաքականությունը նրան թույլ է տալիս արգելափակել այլ ձեռներեցների մուտքը: Անհրաժեշտ է անմիջապես չեղյալ հայտարարել այսօրինակ սահմանափակող որոշումները, իջեցնել միանվագ տուրքերը, դրանք կապել արտադրության ծավալների հետ և տարալուծել ժամանակի մեջ:

Բնակչության եկամուտներ, զբաղվածություն, ծնելիություն, հանրային և սոցիալական ծառայությունների ոլորտ

70. **Կենսաթոշակների շեշտակի բարձրացում.** 2001-2008թթ., չնայած ամենուրեք գովազդվող տնտեսական աճին, սկզբնական եկամուտների բաշխման դինամիկան ունեցել է բացասական միտումներ: Հատկապես ակնհայտ է երկու բան. 1) միջին կենսաթոշակը

(2009թ.) կազմել է միջին աշխատավարձի ընդամենը 20 տոկոսը (1996թ.՝ եղել է 33 տոկոս) և 2) տեղի է ունեցել հարստության աննախադեպ կենտրոնացում մի քանի տասնյակ մարդկանց ձեռքում: Անհրաժեշտ է կենսաթոշակների արագացված բարձրացում միջին աշխատավարձի նկատմամբ, ինչը թույլ կտա կենսաթոշակառուներին հոգալ իրենց նվազագույն կարիքները՝ առանց դիմելու ընտրակաշառքների “օգնությանը”:

71. **Փոքր ու միջին բիզնեսի տեսակարար կշռի բարձրացում.** 2009թ. սկզբներին Հայաստանի տնտեսության 52 տոկոսը գտնվում է 44 ընտանիքի ձեռքին, 26 տոկոսը՝ 220 հազար գյուղացիական, 65 հազար ՓՄՁ-երի եւ անհատ ձեռներեցների ձեռքին, 19 տոկոսը՝ Ռուսաստանի և 3 տոկոսը՝ այլ օտարերկրացիների ձեռքին: Հետևապես, հարստության ցրումը, փոքր ու միջին բիզնեսի տեսակարար կշռի բարձրացումը, հանրապետության բոլոր քաղաքացիներին ձեռնարկատիրությամբ զբաղվելու և բարեկեցիկ կյանք ունենալու հնարավորությունն ապահովելը երկրի անվտանգության աճի հիմնական գրավականներն են:
72. **Տնտեսական ռեսուրսների ապակենտրոնացում.** Պետությունը միջոցներ պետք է ձեռնարկի հարստության գերկենտրոնացումը մեղմելու ուղղությամբ: Հարստության նման կենտրոնացումը պարզապես անհնարին է դարձնում Հայաստանի հետագա գոյությունը: Ավելորդ է դառնում խոսել ընտրական համակարգի գոյության մասին. իշխանությունները հասկանում են, որ նախընտրական կաշառքները „գործուն,, մեխանիզմ են դառնում միայն բնակչության ծայրահեղ աղքատության և սոցիալական բևեռացման պայմաններում: Ակնհայտ է, որ առկա է ուղղակի կապ աղքատության բարձր մակարդակի և կոռուպցիայի ու ստվերային տնտեսության մեջ: Պրոգրեսիվ հարկային համակարգի ներդրմամբ աստիճանաբար պետք է էականորեն մեղմացնել հարստության նման կենտրոնացման մասշտաբները:
73. **Նոր աշխատանքային օրենսգրքի ընդունում, աշխատողների իրավունքների ամրապնդում.** Պետք է ընդունել նոր աշխատանքային օրենսգիրք: 2005թ. ընդունած աշխատանքային օրենսգիրքը ոչ մի աղերս չունի աշխատավորների շահերի պաշտպանության խնդրի հետ: Գործատուներն աշխատանքից ազատում են ում ուզում են և երբ ուզում են: Էականորեն պետք է կրճատվեն մարդկանց աշխատանքից ազատելու՝ գործատուների իրավունքները: Մասնավորապես, պետք է արգելել աշխատանքային որակավորման պատճառաբանությամբ մարդուն աշխատանքից ազատելը: Գործատուն աշխատողի որակավորման մակարդակը չպիտի որոշի ինքնուրույն ատեստացիա անցկացնելով, այլ պետք է դիմի աշխատանքի պետական մարմնին:
74. **Աշխատանքային պայմանագրերի կարգավորում.** Մարդուն աշխատանքի պետք է ընդունել աշխատանքային պայմանագրով, որտեղ պարտադիր պետք է թվարկված լինեն նրա աշխատանքային պարտականությունները: Յուրաքանչյուր աշխատողի համար պարտադիր կարգով աշխատանքային պայմանագրին պետք է կցել երկկողմանի ստորագրված աշխատանքային մանրամասն նկարագրությունը: Հրամանով մարդուն աշխատանքի ընդունելու և ազատելու պրակտիկան պետք է վերացնել:
75. **Գործազրկության նպաստի տևողության երկարացում.** Աշխատանքից ազատելու դեպքում գործատուի կողմից վճարվող նպաստի նվազագույն տևողությունը պետք է սահմանել առնվազն 3 ամիս, իսկ որոշ աշխատանքների համար՝ 6 ամիս (ներկայիս 1-2 ամսվա փոխարեն):
76. **Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի նպատակների ընդլայնում.** Պետք է ուժեղացնել աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ներկայումս վերանվանվել է կայուն զարգացման ծրագիր) և սահմանել ավելի կարճ ժամկետներ:
77. **Ծնելիության խրախուսում:** Երեխաների ծնունդի միանվագ նպաստը պետք է սահմանել 0,5 մլն դրամ (ներկայումս՝ 50 000 դրամ): Երրորդ երեխայից սկսած՝ մայրերին պետք է վճարել 1 մլն, իսկ 5-րդից սկսած՝ 1,5 մլն. դրամ: 30-50 տոկոսով պետք է ավելացնել մայրերի վճարովի արձակուրդի տևողությունը:

78. **Առողջապահության բնագավառում անցում հավաստագրային ֆինանսավորման.** Պետությունը պետք է անցնի առողջապահության պետական հաստատված ծրագրի շրջանակներում հավաստագրային ֆինանսավորման: Պետք է ֆինանսավորվեն ոչ թե առողջապահական հիմնարկություններն ու ձեռնարկությունները, այլ առողջապահական խնդիրներ ունեցող քաղաքացիները: Պետական հավաստագիրը, իբրև արժեթուղթ, ազատ ձևով պետք է շրջանառվի արժեթղթերի շուկայում, սոցիալական ապահովագրության ոլորտում, առողջապահական հիմնարկություններում, առաջին իսկ պահանջի դեպքում ենթակա կլինի պետության կողմից մարման: Այս կերպ կբարձրանա բժշկական ծառայությունների որակն ու մատչելիությունը, կբարելավվի ֆինանսական հոսքերի կառավարելիությունը, կնվազի կոռուպցիան: Առողջապահության ոլորտի պետական բյուջետային ֆինանսավորումը պետք է կազմի ՀՆԱ առնվազն 3 տոկոսը (ներկայումս՝ 1.6 տոկոս՝ 55 մլրդ դրամ): Արդյունքում, նկատի ունենալով նաև մասնավոր տրանսֆերտները, առողջապահության ֆինանսավորումը պետք է կազմի ՀՆԱ առնվազն 6 տոկոսը:
79. **Պետական առողջապահական ծրագրի կարգավորում.** Պետական առողջապահական ծրագիրը բաղկացած պետք է լինի հետևյալ բաժիններից. ա) 100 տոկոսանոց պետական ֆինանսավորում – անկախ քաղաքացու սոցիալական վիճակից (ինֆեկցիոն հիվանդություններ, ծննդաբերություն, մանկական հիվանդություններ և այլն), բ) 100 տոկոսանոց պետական ֆինանսավորում՝ նկատի ունենալով քաղաքացու սոցիալական վիճակը (բացառապես պաշտոնապես հայտարարագրված եկամուտների հիման վրա), գ) համավճար (մի կողմից՝ քաղաքացին, մյուսից՝ պետությունը կամ գործատուն):
80. **Առողջապահության ոլորտում պետական պատվերի մրցութային տեղաբաշխում.** Պետք է անցնել առողջապահության ոլորտում պետական պատվերի մրցութային տեղաբաշխման: Միայն հաղթած կազմակերպություններին պետք է իրավունք տալ հավաստագիր ընդունել քաղաքացիներից:
81. **Կրթության հավաստագրային ֆինանսավորում.** Պետական հաստատված ծրագրի շրջանակներում պետք է իրականացնել կրթության (տարրական և միջնակարգ) հավաստագրային ֆինանսավորում: Պետք է ֆինանսավորվեն ոչ թե դպրոցներն ու կրթօջախները, այլ քաղաքացիները, որոնք էլ կընտրեն համապատասխան կրթօջախը:
82. **Կրթական ծախսերի շեշտակի աճ.** Տարրական, միջնակարգ մասնագիտական և նախնական մասնագիտական կրթության ծախսերը պետք է սահմանել ՀՆԱ 3 տոկոսի չափով՝ առաջիկայում 4 տոկոսին անցնելու հեռանկարով (ներկայումս՝ 2.2 տոկոս՝ 74 մլրդ դրամ):
83. **Բարձրագույն կրթության ծախսերի շեշտակի աճ.** Օրենքով պետք է սահմանել բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման նվազագույն շեմ՝ ՀՆԱ առնվազն 1 տոկոսի չափով (ներկայումս՝ 0.25 տոկոս):
84. **Գիտության տեղափոխում համալսարաններ եւ ֆինանսավորման գրանտային համակարգի հաստատում.** Գիտությունն ամբողջությամբ պետք է տեղափոխել համալսարաններ. գիտությամբ պետք է զբաղվել ուսանողական տարիներից: Բյուջեի միջոցների հաշվին պետք է ստեղծվի գիտական ուսումնասիրությունների ֆինանսավորման պետական գրանտային համակարգ՝ թեմատիկ ֆինանսավորման հիմքերով: Գիտության զարգացմանը պետք է հատկացվի ՀՆԱ առնվազն 1 տոկոսը (2010 թ. գիտությանը հատկացված է 8.6 մլրդ դրամ կամ ՀՆԱ շուրջ 0.25 տոկոսը): Թեմաների ընտրությունը պետք է կատարվի անկախ տեղական և արտասահմանյան հիմնադրամների, պետության կողմից ֆինանսավորվող գիտական խորհուրդների միջոցով:
85. **Գազի, ջրի, էլեկտրաէներգիայի ներկայացվող վճարների վերահսկում.** Պետք է սահմանվեն բնակչությանը մատուցվող ծառայությունների հստակ ստանդարտներ: Այսպես, գազ, ջուր, էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունները պետք է զրկվեն միայնակորեն հաշվիչներն ու ցուցիչները բացելու ու կնքելու իրավունքներից:

Վերջիններիս վրա պետք է լինի 2 կնիք. ընկերությանն ու սպառողինը: Նրանք, առանց մեկը մյուսին թույլ տալու, չեն կարող ինքնուրույնաբար բացել հաշվիչների կապարակնիքները: Մպառողը վճարման ենթակա գումարի մասին տեղեկատվությունը պետք է ստանա գրավոր հաշվի ձևով, որտեղ պետք է պահպանված լինեն բոլոր ռեկվիզիտները, սպառված ծառայության ծավալը, գինը և վճարման ենթակա գումարը:

86. **Հանրային ծառայությունների մատուցման կանոնակարգում.** Պետք է ընդունվի օրենք՝ հանրային ծառայությունների մատուցման կարգի (տեխնիկական կանոնակարգեր) և դրա խախտման կամ ցածրորակության հետևանքով առաջացող վնասների փոխհատուցման, ծառայություն մատուցողի վարչական ու (խստացված) քրեական պատասխանատվության վերաբերյալ: Որպես օրինակ՝ պետք է նշել պետության կողմից զազի որակի պարբերական ստուգման և կանոնակարգին (չափորոշիչին) դրա համապատասխանության պարագան: Պետք է խստորեն կանոնակարգել զազ և էլեկտրաէներգիա մատակարարող ընկերությունների կողմից թույլ տրված արտադրական կորուստների չափը: Գազի, էլեկտրաէներգիայի, ջրի սակագները հաստատելիս հանրությանը մանրամասն տեղեկատվություն պետք է տրամադրել այդ ընկերությունների հաշվեկշիռների, կորուստների չափերի, փաստացի ներդրումների եւ աշխատավարձերի մեծության վերաբերյալ: Նշված միջոցառումները կբացառեն սակագների անհիմն բարձրացումը:

Սեփականաշնորհում, կառուցվածքային քաղաքականություն, հաշվառման կազմակերպում

87. **Պետական գույքի սեփականաշնորհման կանոնակարգում.** 1998-ից ի վեր պետական ունեցվածքի սեփականաշնորհումն իրականացել է 1994-1996 թթ. սեփականաշնորհման քաղաքականության քննադատությամբ: Սակայն այս ասպարեզում կատարված օրենսդրական փոփոխությունները ոչ թե նպատակ ունեին շտկել նախորդ շրջանում ի հայտ եկած կամ տեսանելի դարձած սխալները, կատարելագործել համակարգը, այլ ընդհակառակը՝ սեփականաշնորհումը դարձնել կամայական լուծումների և անվերահսկելի չարաշահումների ասպարեզ: Փոփոխության ենթարկվեց ամբողջ օրենսդրությունը. լուծարվեց սեփականաշնորհման հանձնաժողովը, կառավարությանը (փաստորեն՝ նախագահին) բացառիկ իրավունքներ տրվեցին որոշումներ կայացնելու օբյեկտների սեփականաշնորհման ձևի, մեթոդի, գնի, ժամկետների վերաբերյալ և այլն: Սեփականաշնորհման ենթակա օբյեկտների գները բարձրացնելու պատրվակով արված փոփոխության հետևանքով այդ գները ոչ թե բարձրացվեցին, այլ էլ ավելի իջեցվեցին: Օբյեկտների բաժանորդագրության տոկոսը 25-ից իջեցվեց 1-ի: Այնուհետև հայտարարվեց, թե իբր կարևորը գինը չէ, այլ գնորդի կողմից ներդրումային ծրագիր ներկայացնելը (փորձը ցույց տվեց, որ ոչ մի ներդրումային ծրագիր հնարավոր չէ նորմալ մոնիտորինգ անել զարգացման ցածր մակարդակ ունեցող երկրում): Մտցվեցին “ուղղակի վաճառք” և “օտարում” հասկացությունները, որոնք թույլ տվեցին օբյեկտները վաճառել ոչ հրապարակային պայմաններում, առանց դրանք սեփականաշնորհման ծրագիր մտցնելու և Ազգային Ժողովի համաձայնությունը ստանալու: Դրանով, սեփականաշնորհման համակարգը կատարելագործելու փոխարեն, հաստատվեց ՀՀ նախագահի բացարձակ վոյունտարիզմը. արդարադատության նախարարը սեփականաշնորհեց ավիացիան, ԿԲ նախագահը՝ բանկերն ու Հայփոստը, տրանսպորտի նախարարը՝ երկաթուղին, պաշտպանության նախարարը՝ էներգետիկան: Սկզբունքն էր. պղտոր ջրում ձուկ բռնելը հեշտ է: Սեփականաշնորհման գործընթացը պետք է հստակորեն կանոնակարգվի:
88. **Վիճակագրական մարմինների վրա պետական ճնշման բացառում.** Խնդրահարույց է կանոնավոր վիճակագրության և հաշվառման բնագավառը: Փորձելով ընդգծել իրենց կառավարման շրջանի կարևորությունը՝ ներկա իշխանությունները պարզապես խաղում են մակրոտնտեսական թվերի հետ: Այսպես, 2009թ., ըստ պաշտոնական

վիճակագրության, ՀՆԱ-ն կազմել է 1990թ. 140.9-տոկոսը, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ 178, իրական եկամուտները՝ 21.9, մանրածախ ապրանքաշրջանառությունը՝ 76.4, ծառայությունները՝ 84.9 տոկոս: Սրանք բոլորն էլ պաշտոնական ցուցանիշներ են: Նման առեղծված աշխարհի որևէ այլ երկրում գոյություն չունի: Դրա հետ կապված՝ մակրոտնտեսական ցուցանիշների բազայի ճշտումը, թվերի «ինվենտարիզացիան» անխուսափելի են:

89. **Գործունեության թույլտվությունների կրճատում.** Պետք է առնվազն 10 անգամ կրճատել գործունեության թույլտվություն ստանալու տեսակների ցանկը՝ մի քանի հարյուրից հասցնելով մի քանի տասնյակի: Անհասկանալի է, օրինակ, թե ինչո՞ւ կրպակում առևտուր կատարելու համար մարդը պետք է թույլտվություն ստանա ու դրա համար ահռելի գումար վճարի:
90. **Պետական գույքի օտարման դիմաց վճարման կանոնակարգում.** Պետական գույքը օտարելիս տարածամկետ վճարման պարագայում պետք է մտցվի տոկոս՝ նվազագույն վերաֆինանսավորման տոկոսադրույքի չափով:

Գյուղատնտեսություն

91. **Գյուղատնտեսական մթերքների արտադրության սուբսիդավորում.** Գյուղատնտեսության հետագա զարգացումը, մշակվող հողերի տեսակարար կշռի բարձրացումը կապված են գյուղատնտեսական արտադրանքի մի մասի պետական միջնաժամկետ սուբսիդավորման և գյուղմթերքների արտահանման խրախուսման հետ: Պետք է պետական աջակցություն ցույց տալ գյուղատնտեսությանը: Մասնավորապես, ամեն տարի ՀՀ բյուջեում պետք է առանձին հավելվածով նշվեն այն մթերքների և գյուղական բնակավայրերի (հատկապես՝ լեռնային ու ծայրամասային գյուղերի) ցուցակները, որոնց նկատմամբ տվյալ բյուջետային տարում սուբսիդիաներ են նախատեսվում: Մթերման համապատասխան փաստի դեպքում գյուղացին պետք է ստանա սուբսիդիա՝ յուրաքանչյուր միավոր արտադրված մթերքի դիմաց: Սուբսիդիաների քաղաքականությունն առանձին դեպքերում (լեռնային գյուղական բնակավայրեր) պետք է զուգակցել երաշխավորված գների քաղաքականության հետ:
92. **Փոքր գյուղացիական տնտեսությունների խրախուսում.** Գյուղատնտեսության ոլորտում ստեղծված ծայրագույն վատ վիճակը ստիպում է այս ոլորտում տարվող տնտեսական քաղաքականությանը վերաբերվել հրատապ կարգով: Ներկա իշխանությունների տվյալներով՝ 1990-2009թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը աճել է 2,14 անգամ: Վերջին տարիներին, սակայն, իրադարձությունները զարգանում են այնպես, որ գյուղացին հողազրկվում է, բատրակ դառնում: Այդ պայմաններում ՀՀ-ում անկախ, իր հողի վրա աշխատող, բարեկեցիկ ֆերմերների կամ գյուղացիների դաս չի կարող ձևավորվել, ինչը կատարված ռեֆորմի հիմնական նպատակն էր: Այսպես, վերլուծությունը ցույց է տալիս, որ 2001թ. նոր հողային օրենսգրքի ընդունումով ներկայիս իշխանությունները նպատակ ունեն ոչ թե շարունակել սկսած բարեփոխումները, այլ հողը հանձնել խոշոր օլիգարխներին, բյուրոկրատներին, բարձրաստիճան պետական պաշտոնյաներին և նրանց թիկնապահներին: Մասնավորապես, սրանց հասան այդ շրջանում սեփականաշնորհված 20 տոկոս պահուստային հողերը: Բացի դա, նրանք զանգվածաբար, չնչին գներով գյուղիցիներից գնում են սեփականաշնորհված հողակտորները: Հողի նկատմամբ սեփականության՝ գյուղական համայնքի անդամների առաջնային իրավունքի անտեսումը հանգեցրեց քաղաքից եկած խոշոր հողատերերի գեիշխանությանը: Գյուղում արագորեն ձևավորվում է դասակարգային հակամարտություն: Խոշոր հողատերերին է ուղղված իշխանությունների ուշադրությունը (մեծ հաշվով՝ իշխանության ներկայացուցիչներն են այդ հողատերերը), նրանց գործունեությունը օրեցօր սնանկացնում ու տնտեսապես անիմաստ է դարձնում գյուղացիական տնտեսությունների գոյությունը: Վերջինները զանգվածաբար լքում են

իրենց հողակտորները, հնարավորության դեպքում վաճառում դրանք, դառնում բատրակներ, գալիս են քաղաքներ կամ էլ արտագաղթում: 2007-2009 թթ. առավել ցայտուն դրսևորում ստացան վարելահողերի մշակումից հրաժարվելու դեպքերը: Հետևապես, խոշոր հողատիրության դեմ պայքարը, օրենսդրորեն և գործնականում մանր եւ միջին գյուղացիական տնտեսությունների խրախուսումը, վարելահողերի սեփականության նկատմամբ տվյալ համայնքի գյուղացիների առաջնային իրավունքների վերականգնումը գյուղում տնտեսական քաղաքականության առանցքային խնդիր է:

93. **Մեծածախ շուկաների ստեղծում.** 1998թ. ՀՀ իշխանությունները հրաժարվեցին Մեծածախ շուկաների ծրագրից: Վերջինս Եվրոբանկի միջոցների հաշվին իրականացվող մի ծրագիր էր, որի համաձայն հանրապետության մի քանի վայրերում պետք է պետության մասնակցությամբ շուկաներ ստեղծվեին, ուր գյուղացին հնարավորություն կունենար իրացնելու արտադրած բարիքները: Ներկայումս, ոչխարների մասսայական արտահանման պարագայում, կառավարության ներկայացուցիչները փորձում են արդարանալ. ի՞նչ կարող ենք անել, եթե գյուղացիներն ինքնական վաճառում են իրենց ոչխարները օտարներին: Եթե մեծածախ շուկաների ծրագիրը չձախողվեր, գյուղացիներն ու հանրապետությունը նման վիճակում չէին հայտնվի: Այդ ժամանակ յուրաքանչյուր մթերքի գծով պահանջարկն ու առաջարկը կհավասարակշռվեին այն կետում, երբ կարտահանվեր միայն ավելցուկային արտադրանքը: Այսպիսով, պետության վերահսկողությամբ 5-10 մեծածախ շուկաների ստեղծման ծրագիրն անհետաձգելի խնդիր է: Դրանց բացակայության պայմաններում գյուղացիները չեն կարողանում մրցակցել խոշոր տնտեսությունների հետ պետական գնումների հարցում: Մասնավորապես, պարենամթերքի մի զգալի մասը գնելով խոշոր հողատերերից՝ ՀՀ պաշտնախնդ, մյուս խոշոր բյուջետային սպառողները, գործնականում քայքայում են գյուղացիությունն ու գյուղատնտեսությունը:
94. **Գյուղացիական տնտեսությունների կողմից մանրածախ շուկաների հիմնում.** 1999-2005թթ. իշխանություններն առանց իրենց հաշիվ տալու օտարեցին Երևանի կոլտնտեսային շուկաները: Զավեշտալին այն է, որ դրանք երբեք պետական չէին էլ եղել: Դրանք պատկանում էին կոլտնտեսություններին: Պետությունը պետք է փոխեր դրանց կազմախրավական ձևը և ստեղծեր մանրածախ շուկաներ՝ գյուղացիական տնտեսությունների մասնակցությամբ: Ի վերջո, այդ շուկաներն անցան գյուղի հետ կապ չունեցող մարդկանց ձեռքը: Շուտով դա հանգեցրեց նրան, որ գյուղմթերքների մանրածախ գինը բարձրացավ, մեծածախը՝ ոչ: Ներկայումս մթերքների ճնշող մեծամասնության նկատմամբ մեծածախ գինը կազմում է մանրածախի միայն 25-30 տոկոսը: Նման բան աշխարհում չկա: Գյուղացու աշխատանքի 70-80 տոկոսը հասնում է շուկաների տերերին: Քաղաքներում գյուղացիական տնտեսությունների կողմից հիմնած շուկաների վերականգնումն ու նորերի բացումը գյուղատնտեսությունն այս ծանր վիճակից դուրս բերելու հիմնական ուղիներից է:
95. **Մերմացուի, թունաքիմիկատների, պարարտանյութերի նկատմամբ տարբերակված ԱԱՀ կիրառում.** Պետք է վերացնել ԱԱՀ-ը ներմուծվող սերմացուի վրա, այլապես այն, փաստորեն, միջնորդավորված գործում է գյուղացու նկատմամբ: Գյուղատնտեսական որոշ ապրանքների նկատմամբ (թունաքիմիկատներ, պարարտանյութեր և այլն) պետք է գործի տարբերակված ԱԱՀ սխեման:
96. **Ոռոգման, ագրուերվիսի, գյուղմթերքների իրացման ու գյուղատնտեսական աշխատանքների ֆինանսավորման ոլորտներում գյուղատնտեսական փոխօգնության կոոպերատիվների ստեղծում.** Գյուղատնտեսությունը հայտնվել է ծանրագույն իրավիճակում: Գյուղատնտեսությունում իրերի վիճակը փրկելու համար անհրաժեշտ է լայնորեն ծավալել կոոպերացիան ու գյուղփոխօգնությունը: “Չորս հագուստների” (տարվա եղանակներին համահունչ) կոնցեպցիայի կիրառումը թույլ կտա գյուղատնտեսական կոոպերատիվներ ու փոխօգնության կազմակերպություններ (ՓԿ)

ստեղծել ոռոգման, ագրոսերվիսի, գյուղմթերքների իրացման ու գյուղատնտեսական աշխատանքների ֆինանսավորման գործում:

97. **Ոռոգման համակարգի բարեփոխում.** Մնալով իր հողի տերը՝ գյուղացին, օրինակ, փայ կստանա ոռոգման համակարգից, որը կտրվի այդ համակարգը կառավարող գյուղացիական կոոպերատիվին: Վեջինիս մասնակիցները պետք է լինեն միայն գյուղացիները, ում հողերը այդ համակարգից պետք է ոռոգվեն: ՓԿ-ները կնշանակեն ոռոգման ջրի գինը: ՓԿ-ի անդամ գյուղացիները աշխատանքային մասնակցություն կունենան ոռոգման գործում: Գյուղացին պետք է եկամուտ ստանա ինչպես իր հողից, այնպես էլ ոռոգման ՓԿ-ում մասնակցություն հաղես բերելուց:
98. **Փոխօգնության կոոպերատիվների տարածում.** ՓԿ-ներում օրենքով պետք է արգելվի գյուղացիական տնտեսություն չունեցող քաղաքացիների մասնակցությունը: Ոռոգման համակարգերի կոոպերատիվներին բնորոշ մեխանիզմը պետք է կիրարկվի նաև արտադրանքի նախնական մշակման ու վաճառքի, ագրոսպասարկման և փոխօգնության հիմնադրամների ստեղծման պարագայում: Հանրապետությունով մեկ պետք է ստեղծվեն 1200-1500 նման ՓԿ-ներ, ուր իրենց աշխատանքային մասնակցությունը կբերեն մինչև 150000 գյուղացիական տնտեսություններ:
99. **Փոքր ու միջին, էլիտար ու էկոլոգիապես մաքուր մթերքներ արտադրող գյուղացիական տնտեսությունների գործունեության պետական աջակցություն.** Նշված միջոցառումները թույլ կտան նոր շունչ տալ փոքր եւ միջին գյուղացիական տնտեսություններին՝ հիմնված ընտանեկան ու փոխօգնության միջոցով ներգրավված աշխատանքային ռեսուրսների վրա: Ի վերջո, գերակշռող տեսակը կլինեն 5-10 հա (առավելագույնը) չափեր ունեցող և առավելապես ընտանեկան աշխատուժն ու փոխօգնությամբ մյուս գյուղացիների աշխատանքն օգտագործող տնտեսությունները: Կարճ ժամկետում հանրապետության գյուղատնտեսություն կարող է մասնագիտանալ էլիտար, էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրության և արտահանման գործում:
100. **Գյուղացիների համար մասնագիտական պետական դասընթացների կազմակերպում.** Հանրապետությունում պետք է բացվեն տասնյակ դպրոցներ, ուր գյուղացիները պետության հաշվին կստանան հիմնական գյուղատնտեսական ու տնտեսագիտական գիտելիքներ: